

## <<Աղինի առողջության կենտրոն>>ՊՈԱԿ

### Եռամյա զարգացման ծրագիր

1.<<Աղինի առողջության կենտրոն>>ՊՈԱԿ –ի զարգացման և կառավարման ծրագիրը կազմելիս հիմք է ընդունվել առողջության կենտրոնի գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերը, առողջապահության տեսլականը: Աղինի առողջության կենտրոն ՊՈԱԿ-ի գործունեության զարգացման հիմնական ուղղություններն են կառավարման համակարգի կատարելագործում, բուժաշխատողները մասնակցում են ընթացիկ վերապատրաստումների, աշխատողների հավելյալ գումարների առկայության դեպքում կատարելու դրամական խրախուսումներ: Բժշկական սարքավորումներով գործիքներով արդիականացման և գույքի ապահովման հարցում կատարվում է աշխատանքներ:

2. ՀՀ ԱՆ ԱՄԻ –ի կողմից Աղինի ԱԿ-ն ընտրովի որոշ կազմակերպությունների հետ ընդգրկվել էր առողջապահական համակարգի բարեփոխումների շրջանակներում առողջապահության ֆինանսավորման, որակի բարելավման և տեղեկատվական համակարգերի գնահատման նպատակով իրականացվող հարցման ցանկում: Արդյունքները օգտագործվելու էր առողջապահության ռազմավարության մշակման ընթացքում իրականացվող վերլուծություններում: Զուգահեռ մասնակցում էր Ասիական բանկի ներկայացուցիչ, որն էլ խոստացավ իրենց օժանդակությունը բժշկական սարքավորումներով և գույքով:

### 3. Կառավարման համակարգի կատարելագործում և նոր ծառայությունների ստեղծում

"Աղինի առողջության կենտրոնի կառավարման աշխատանքները կանոնակարգված են գործող օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ: Զարգացման ծրագիրը պետք է ուղղված լինի առողջության կենտրոնի ներքին կառուցվածքի զարգացմանը: Նախատեսվում է տարեվերջին ձեռք բերելու Հաշվապահական ծրագիր առողջության կենտրոնի ֆինանսատնտեսական գործունեությունը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու համար: Սպասարկվող ազգաբնակչության բժշկական օգնության որակի բարձրացման նախատեսվում է նոր էլեկտրասրտագրության ապարատ ձեռք բերելու 2020 թվականին:

### 4. Շենքին ԲՄԿ-ների տարածքային պայմանների բարելավում

<<Աղինի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ-ի շենքը մեկ հարկանի շինություն է կատարվում է տարածքում աշխատանքներ կանաչապատման, ծառատունկ և այլն: Բուժամանկաբարձական կետից կարիք ունեն կապիտալ վերանորոգման, համապատասխան բժշկական գործիքներով և գույքով ապահովման գյուղ Ջրափիի և Մարակապի ԲՄԿ-ները, որը հնարավոր է իրականացնելու հովանավոր կազմակերպությունների միջոցով տվյալ հարցում մշտական աշխատանքներ են տարվում գտնելու հովանավորներ:

## 5.Բժշկական սարքավորումներով և գործիքներով արդիականացում

Աջակից կազմակերպություններին հովանավորների օգնությամբ ձեռքբերելու բուժ.սարքավորումներ և գործիքներ՝ առողջության կենտրոնի եկամուտներից ելնելով հնարավորության սահմաններում:

<<Ադինի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ

Տնօրեն

Վ.Վարդանյան

22.10.2019թ.

